

## ԿԱՐԾԻՔ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

**Հռիփսիմե Հովհաննեսի Հովսեփյանի Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Ներքին աուդիտի խնդիրները ռիսկերի բացահայտման և կանխման գործում» թեմայով ատենախոսության վերաբերյալ**

### **Ատենախոսության թեմայի արդիականությունը**

Հռիփսիմե Հովսեփյանի ատենախոսությունը նվիրված է ներքին աուդիտի զարգացման և ռիսկերի բացահայտման ու կանխման գործում առկա հիմնական խնդիրների վերհանմանն ու դրանց մեղմման և ներքին աուդիտ մասնագիտության գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացման ուղիների բացահայտմանը:

Լինելով կորպորատիվ կառավարման ինտեգրալ մաս՝ ներքին աուդիտը կարևոր դերակատարություն ունի կազմակերպությունների արժեքի ավելացման և գործունեության բարելավման գործում: Ներկայիս գլոբալ հիմնախնդիրներն ու նոր մարտահրավերներն ավելի են սրում ձեռնարկատիրական գործունեության շահութաբերության, արժեքի ավելացման, վերահսկողական և կառավարման գործառույթների կատարելագործման հարցերը, ինչն էլ ավելի արդիական է դարձնում ներքին աուդիտի գործառույթի արդյունավետության բարձրացման ուղիների և դրա զարգացման հիմնական խոչընդոտների բացահայտման անհրաժեշտությունը:

Այդուհանդերձ, մասնագիտությունը թե՛ Հայաստանի և թե՛ ողջ աշխարհի մասշտաբով դեռևս չի հասցրել դառնալ լիարժեք ընդունված, ընկալված և հասկացված, ինչն էլ լրացուցիչ խոչընդոտներ է ստեղծում դրա արդյունավետ գործունեության, իր առջև դրված նպատակների ու խնդիրների լուծման, ինչպես նաև առաքելության իրականացման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներքին աուդիտի պաշտոնական մեթոդաբանություն է ընտրված ռիսկահենք աուդիտը՝ հեղինակն աշխատանքում առանձնացրել է ներքին աուդիտի դերերն ու գործառույթները կազմակերպությանը բնորոշ, ինչպես նաև ներքին աուդիտին հատուկ ռիսկերի բացահայտման ու

կանխման գործում և այդ տրամաբանությամբ էլ ներկայացրել առկա հիմնականխնդիրներն ու դրանց մեղմման հնարավոր ուղիները:

Նշված խնդիրների գիտական հետազոտմանը և լուծումների մշակմանն ուղղված Հռիփսիմե Հովսեփյանի ատենախոսությունը համարում ենք արդիական, իսկ արդյունքները՝ կարևոր:

**Ատենախոսության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության գլխավոր նպատակն է բացահայտել ներքին աուդիտի հիմնական խնդիրներն իրեն հատուկ ռիսկերի կառավարման և կազմակերպությանը բնորոշ ռիսկերի բացահայտման ու կանխման գործում և ներկայացնել դրանց մեղմման, ինչպես նաև ներքին աուդիտի արդյունավետության բարձրացման ուղիները: Այդ նպատակն իրագործելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել ներքին աուդիտի փիլիսոփայությունը, հստակորեն տարանջատել այն հարակից մասնագիտություններից և ուղղություններից՝ առանձնացնելով գլխավոր տարբերակիչ գծերն ու առանձնահատկությունները,
- վերհանել մասնագիտության ընկալման խնդիրներն ու դրանց դրսևորումները՝ ներկայացնելով դրանք շտկելու հնարավոր ուղիները,
- ուսումնասիրել ներքին աուդիտի իրականացման գծով տեղական և միջազգային փորձը, կարգավորման տեղական և միջազգային օրենսդրաիրավական դաշտը, կատարել համադրություններ և համեմատություններ՝ հասկանալու և բացահայտելու համար առկա խնդիրների ծագման աղբյուրներն ու բարելավման հնարավոր ուղղությունները,
- տարանջատել ներքին աուդիտին ներհատուկ հիմնական ռիսկերը,
- ներկայացնել ռիսկերի կառավարման գործընթացներում ներքին աուդիտի հնարավոր դերերը և ռիսկերի բացահայտման ու կանխման գործում վերջինիս հիմնական խնդիրներն ու դրանց մեղմման հնարավոր ուղիները:

**Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 182 էջի վրա (առանց հավելվածների):

Ատենախոսության «**Ներածություն**» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը,

ձևակերպվել են հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, ինչպես նաև դրանց տեսական ու գործնական նշանակությունը:

Հետազոտության առաջին՝ «**Ներքին աուդիտի տեսամեթոդական հիմքերը**» գլխում պատմական ակնկարկ է կատարվել ներքին աուդիտի ծագմանն ու զարգացմանը, քննարկվել են դրա փիլիսոփայությանն առնչվող մի շարք հարցեր, ներկայացվել են ներքին աուդիտի էությունը, գիտամեթոդական հիմքերը, հիմնական գործառույթներն ու տեսակները, դրա դերակատարությունը կորպորատիվ կառավարման համակարգում, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործում, առանձնացվել են ներքին աուդիտին ներհատուկ հիմնական ռիսկերը: Այս ենթագլխում ներկայացվել են ատենախոսության չորրորդ գիտական նորույթի տեսամեթոդական հիմքերը:

Առաջին ենթագլխում ատենախոսն առանձնացրել է ներքին աուդիտի ընկալման հետ կապված հիմնական խնդիրները, ներկայացրել դրանց ծագման տեսական ու գործնական հիմքերն ու մեկնաբանությունները, ներքին աուդիտը տարանջատել հարակից մասնագիտություններից ու ուղղություններից՝ առանձնացնելով հիմնական տարբերակիչ գծերն ու բնութագրերը:

Երկրորդ ենթագլխում ներկայացվել են կորպորատիվ կառավարման համակարգի էությունն ու հիմնական բնորոշումները, ներքին աուդիտի դերն այդ համակարգում, վերլուծվել են ատենախոսության առաջին գիտական նորույթի համար հիմք հանդիսացող «Ռիսկերի արդյունավետ կառավարման պաշտպանական 3 գծեր» և «ՆԱԻ 3 գծեր» մոդելները, տարվել են համեմատականներ, առանձնացվել են մոդելների հիմնական բացերն ու վեր հանվել բարելավման ուղիները: Կազմակերպության վերահսկողական ընդհանուր համակարգում ներքին աուդիտի տեղի և դերի հստակեցման նպատակով հեղինակի կողմից առաջարկվել է ընդհանրական մոդել, որը վերաբերում է ատենախոսության երկրորդ գիտական նորույթին, առանձնացվել են ներքին աուդիտի և վերահսկողական գործառույթների հիմնական տարբերակիչ գծերը, լուսաբանվել են նաև ներքին աուդիտի ռեսուրսավորման հիմնական մոդելներն իրենց թերություններով և առավելություններով:

Երրորդ ենթագլխում ներկայացվել են ռիսկերի կառավարման հիմնական բնորոշումները, էությունը, անդրադարձ է կատարվել ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտների այն դրույթներին, որոնք առնչվում են ռիսկերի կառավարմանը: Այստեղ քննարկվել են նաև ռիսկերի կառավարման գործում մասնագիտական գրականությունում առանձնացված ներքին աուդիտի 3 խումբ դերերը:

Չորրորդ ենթագլխում ընդհանրացված կերպով առանձնացվել են ներքին աուդիտին ներհատուկ հիմնական ռիսկերը՝ համապատասխան մեկնաբանություններով, օրինակներով, նշված ռիսկերի առաջացման պատճառներով և մեղմմանն ուղղված հնարավոր քայլերի հետ կապված առաջարկություններով:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ներքին աուդիտի զարգացման միջազգային փորձը»** գլխում ներկայացվել են ներքին աուդիտի կարգավորմանն առնչվող միջազգային գլխավոր կառույցները և դրանց կարգավորումները, քննարկվել է ներքին աուդիտի կազմակերպման և զարգացման միջազգային փորձը՝ առանձին տարածաշրջանների և երկրների գծով իրականացված մի շարք ուսումնասիրությունների արդյունքներով:

Առաջին ենթագլխում անդրադարձ է կատարվել ներքին աուդիտի մասնագիտական ուղեցույցների (ներառյալ՝ ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգի) ստեղծմանն ու զարգացմանը: Ներկայացվել են նաև գլխավոր մասնագիտական կառույցները, ինչպես նաև ներքին աուդիտին առնչվող դրանց կարգավորումների առանցքային դրույթները:

Երկրորդ ենթագլխում պատկերվել է ներքին աուդիտի էվոլյուցիոն շղթան, քննարկվել և վերլուծվել են տարբեր երկրներում ու տարածաշրջաններում ներքին աուդիտի կազմակերպման և իրականացման առանձնահատկությունները, ինչի արդյունքում հնարավոր է եղել ստանալ ներքին աուդիտ մասնագիտության զարգացման ընդհանուր պատկերն աշխարհի մակարդակով:

Երրորդ ենթագլխում դիտարկվել են ներքին աուդիտի գլոբալ մարտահրավերները, և մասնավորապես գլոբալ պանդեմիկ ճգնաժամի համատեքստում ներկայացվել ու վերլուծվել են ներքին աուդիտի հնարավոր խնդիրները մի շարք ուսումնասիրությունների արդյունքներով:

Չորրորդ ենթագլխում քննարկվել է ռիսկերի բացահայտման և կանխման գործում ներքին աուդիտի միջազգային փորձը, անդրադարձ է կատարվել ներքին աուդիտի հաշվետվողականության և ռեսուրսավորման մոդելների ընտրության հետ կապված գլխավոր հիմնահարցերին, միջազգային փորձի տեսանկյունից որոշակի վերլուծություններով հիմնավորվել է ատենախոսության առաջին գիտական նորույթը:

Ատենախոսության երրորդ՝ **«Ներքին աուդիտի արդի վիճակը և հիմնական խնդիրները ՀՀ-ում»** գլխում քննարկվել են ՀՀ-ում ներքին աուդիտի իրականացման մասով օրենսդրաիրավական համակարգի հնարավորություններն ու բացերը, ներկայացվել են ՀՀ-ում ներքին աուդիտի կազմակերպման, իրականացման և զարգացման ընդհանուր պատկերն ու հիմնական խնդիրները:

Առաջին ենթագլխում ՀՀ-ում ներքին աուդիտի գծով օրենսդրաիրավական կարգավորումների ընդհանուր պատկերի ներկայացման արդյունքում հայտնաբերվել են մի շարք խնդիրներ հատկապես հանրային հատվածում, որոշակի նկատառումներ են կատարվել ներդրումային ոլորտին վերաբերող, ինչպես նաև կորպորատիվ օրենսդրությանն առնչվող իրավական ակտերի մասով, իսկ հաշվետվողական համակարգի կատարելագործման համար առաջարկություններ են կատարվել բանկային և ապահովագրական ոլորտները կարգավորող դաշտի գծով: Այս ենթագլխում հիմնավորվել է ատենախոսության երրորդ գիտական նորույթը:

Երկրորդ ենթագլխում տարբեր ոլորտներ ներկայացնող ՀՀ կազմակերպությունների շրջանում ատենախոսի կողմից իրականացված հարցումների և ՀՀ հանրային հատվածը կարգավորող լիազոր մարմնի կողմից հրապարակված հաշվետվությունների վերլուծության արդյունքում ներկայացվել է ՀՀ-ում ներքին աուդիտի կազմակերպման և իրականացման ընդհանուր պատկերը, ներառյալ՝ մասնագիտական որակավորումների առկայության, մասնագիտական միջազգային ստանդարտներին ներքին աուդիտորների գործունեության համապատասխանության մակարդակը, ինչպես նաև ՀՀ-ում գործող ներքին աուդիտի ռեսուրսավորման մոդելները: Այս ենթագլխում ևս հիմնավորումներ են տրվել ատենախոսության երրորդ գիտական նորույթի գծով:

Երրորդ ենթագլխում ատենախոսը որոշակի մեթոդական մոտեցում է ներկայացրել ներքին աուդիտի ռիսկահենք պլանավորման գործընթացում ֆինանսական վերլուծությունների կիրառման հնարավորությունների օգտագործման վերաբերյալ՝ որպես օրինակ օգտագործելով ՀՀ բանկերի մի շարք ֆինանսական ցուցանիշներ և դրանց հիման վրա հաշվարկված գործակիցներ: Այս ենթագլխում հիմնավորվել է ատենախոսության չորրորդ գիտական նորույթի երկրորդ մասը:

Չորրորդ ենթագլխում ատենախոսի կողմից ՀՀ կազմակերպությունների գծով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով ներկայացվել են ռիսկերի բացահայտման և կանխման գործում ներքին աուդիտի հիմնական խնդիրները ՀՀ-ում: Այստեղ քննարկվել են ՀՀ կազմակերպություններում ներքին աուդիտի անկախության, կորպորատիվ կառավարման արդյունավետության, ներքին աուդիտի հաշվետվողականության, կազմակերպության արժեքի ավելացման և գործունեության բարելավման, ինչպես նաև ռիսկերի բացահայտման և կանխման գործում ներքին աուդիտի դերի, «Պաշտպանական 3 գծեր» մոդելի կիրառելիության և արդյունավետության, ներքին աուդիտի արտաքին գնահատման իրականացման գծով մի շարք տվյալներ և գնահատման արդյունքներ: Սույն ենթագլխում ՀՀ փորձի

տեսանկյունից հիմնավորումներ են տրվել ատենախոսության առաջին գիտական նորույթի, ինչպես նաև չորրորդ նորույթի առաջին մասի գծով:

«Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

### **Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը**

Հետազոտության օբյեկտ է ճանաչվել ներքին աուդիտի ոլորտը, իսկ առարկա՝ ներքին աուդիտի դերը, խնդիրներն ու հնարավորություններն ինչպես կազմակերպությանը բնորոշ, այնպես էլ ներքին աուդիտին հատուկ ռիսկերի բացահայտման և կանխման գործում:

Հետազոտության արդյունքները կարող են գործնական կիրառություն գտնել ներքին աուդիտին առնչվող օրենսդրակական դաշտի կատարելագործման նախաձեռնություններում, իսկ կազմակերպությունների կառավարող մարմինների և խորհուրդների դեպքում՝ ուղենիշ հանդիսանալ կորպորատիվ կառավարման համակարգի բարելավման, ներքին աուդիտի գործառույթների արդյունավետության բարձրացման անհրաժեշտ հիմքերի և նպաստավոր միջավայրի ձևավորման, ինչպես նաև գնահատման արդյունավետ համակարգի ներդրման համար:

### **Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը**

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվել է հետևյալում.

- «Ներքին աուդիտորների ինստիտուտի 3 գծեր» մոդելի վերլուծության և կիրառելիության գնահատման արդյունքում բացահայտվել են մոդելի հնարավոր բացերն ու առաջարկվել բարելավման ուղիներ,
- կազմակերպության ընդհանուր վերահսկողական համակարգում ներքին աուդիտի դերն ու խնդիրները հստակեցնելու նպատակով մշակվել և ներկայացվել է կազմակերպության վերահսկողական համակարգի պարզեցված մոդել,
- ներքին աուդիտի հաշվետվողականության համակարգի բարելավման, գործառույթների հստակեցման և արդյունավետության գնահատման համակարգի կատարելագործման նպատակով բացահայտվել են ՀՀ օրենսդրական խնդիրներն ու ներկայացվել լուծման ուղիները,
- ներքին աուդիտի գործառույթների արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել և ներկայացվել է ներքին ու արտաքին գնահատման

ընդհանրական հայեցակարգ, ինչպես նաև աուդիտորական աշխատանքների պլանավորման գործընթացում ֆինանսական վերլուծությունների կիրառման մեթոդական մոտեցում:

### **Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ**

1. Ատենախոսության առաջին գլխի 2-րդ ենթագլխում որպես հետազոտության երկրորդ գիտական նորույթ ներկայացված կազմակերպության վերահսկողական համակարգի պարզեցված մոդելն ունի ընդհանրական տեսք: Կարծում ենք, որ ատենախոսությունը կշահեր, եթե մոդելի վերաբերյալ ներկայացված մոտեցման գծով մեկնաբանությունները համեմված լինեին նաև որոշակի օրինակներով:
2. Ատենախոսության առաջին գլխի 4-րդ ենթագլխում ներքին աուդիտին ներհատուկ ռիսկերի թվում հեղինակի կողմից նշված ներքին աուդիտորների անվտանգության ռիսկն ընդհանուր առմամբ վերացական բնույթ է կրում: Կարծում ենք՝ ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակը որոշակի օրինակներով փորձեր հիմնավորել նշված ռիսկի գոյությունը և էականությունը:
3. Ատենախոսության առաջին գլխում ներքին աուդիտի միջազգայնորեն ճանաչված սահմանման մեջ նշված է նաև խորհրդատվական գործառույթը, մինչդեռ երրորդ գլխի 1-ին ենթագլխում որոշ ոլորտներ կարգավորող ՀՀ օրենսդրական ակտերում ներքին աուդիտին վերաբերող դրույթներում այդ գործառույթը բացակայում է: Ատենախոսն աշխատությունում անդրադարձ է կատարել ներքին աուդիտի սահմանման հետ կապված խնդիրներին, սակայն վերոնշյալ դրույթներում ներքին աուդիտի խորհրդատվական գործառույթի բացակայության վերաբերյալ հստակ մեկնաբանություն չի ներկայացրել:
4. Ատենախոսության երկրորդ գլխում միջազգային փորձի գծով տարբեր տարածաշրջանների վերաբերող որոշ վերլուծություններ կատարվել են 2015թ.-ին վերաբերող տվյալների հիման վրա: Կարծում ենք՝ ատենախոսությունը կշահեր, եթե նշված վերլուծությունների ու դրանց հիման վրա կատարված եզրահանգումների հիմքում ընկած լինեին վերջին տարիների տվյալներ, քանի որ դրանք հնարավորություն կտային ավելի թարմ պատկեր ստանալ աշխարհում ներքին աուդիտի իրականացման և խնդիրների առկայության մասով:

5. Ատենախոսության երրորդ գլխի 3-րդ ենթագլխում ռիսկահենք պլանավորում կատարելու գործընթացում ֆինանսական ցուցանիշներն ու դրանց հետ կապված վերլուծություններն օգտագործելու մասով ատենախոսի կողմից ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները կրում են ընդհանրական բնույթ: Կարծում ենք, որ ատենախոսությունը կշահեր, եթե նշված դիտարկումներն ավելի հասցեական և թիրախային լինեին:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա, և հետապնդում են ռիսկերի բացահայտման ու կանխման գործում ներքին աուդիտի դերակատարության, ինչպես նաև մասնագիտության հետագա զարգացման այլ ասպեկտները ևս բացահայտելու նպատակ: Հռիփսիմե Հովհաննեսի Հովսեփյանի՝ «**Ներքին աուդիտի խնդիրները ռիսկերի բացահայտման և կանխման գործում**» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ռիսկերի բացահայտման ու կանխման գործում ներքին աուդիտի հիմնական խնդիրների վերահանման ու դրանց մեղմման, ինչպես նաև ներքին աուդիտ մասնագիտության զարգացման, ներառյալ՝ ՀՀ-ում այդ ոլորտի բարելավման համարկարևորություն ունեցող խնդիրներ: Վերլուծության արդյունքում առաջադրված են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ:

Հետազոտության արդյունքները քննարկված են Երևանի պետական համալսարանում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված թվով 6 (վեց) գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատարակման պահին ընդունելի ու գրախոսվող հանդեսներում և ժողովածուներում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին ու ատենախոսության բովանդակությանը համապատասխան արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Այսպիսով, **Հռիփսիմե Հովհաննեսի Հովսեփյանի՝ «Ներքին աուդիտի խնդիրները ռիսկերի բացահայտման և կանխման գործում»** թեմայով պաշտպանության ներկայացված



**ատենախոսությունը** համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է **Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

**Պաշտոնական ընդդիմախոս՝  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր**



**L.Տ. Գրիգորյան**

**L. Տ. Գրիգորյանի ստորագրության  
իսկությունը հաստատում եմ  
ՀՊՏՀ-ի գիտական քարտուղար՝  
5 դեկտեմբերի 2022**



**L.Տ. Դարբինյան**